

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Սոխն ու սխտորը

«Ա՛յ թե քոռուղուփ, դու հոտած զատ ես,
Ժանգի պարկի պես լըցվել, տռըզել ես»:—
Մեկ օր սըխտորը էսպես խոսք քցեց,
Խեղճ սոխի գըլխին թուք ու մուր ածեց:
«Կողքդ հաստացել, գլուխըդ գիրացել,
Ի՞նչ ես դու էդպես շատ ուռել, փքվել:
Ինչ պտուղ որ ես, քեզ ո՞վ չի գիտի,
Որ ուզում ես՝ թե հենց քեզ տեղ ըլի:
Մարդ քեզ ուտելիս, բերանն ես կըծում,
Դանակ դիպչելիս՝ աչքը քոռացնում:
Չեմ գիտում՝ մարդը ախր ի՞նչ լազաթ ա
Քեզանից տեսնում, որ քեզ ցանում ա:
Էլ մարդ ու բոստան հեչ չի՛ մընացել,
Բոլոր գեշ հոտովըդ բռնել, հոտացրել:
Ընչանք չեն էփում, քո աչքըդ հանում,
Դու քո փիս հոտը չե՛ս պակասացնում»:
«Տո դու քո Աստվածն՝ ով էլ ինչ ասի,
Խոսքը սազ կըգա, իրավունք ունի»:—
Սոխը ջուղաբը եդ դարձացրեց, ասաց:
«Է՞դ էր մնացել, փա՛ռք քեզ՝ տե՛ր աստված.
Որ դո՞ւ էլ ըռեխդ ցրես ինձ վրա:

Տո ա՛յ անզգամ, հոտած, բեհայա,
Եփելիս էլ ա ես հոտս քաշում եմ,
Մարդի բերանը ապականում չեմ:
Քո՞ գլուխը լաս՝ որ խաշի միջումն
Է՛ն հոտն ես թողում, ուտողի բերնումն,
Որ մոտի կանգնողն իրանից գնում,
Սիրտը խառնվում, ու քյալլեն ծակվում:—
Գիտե՞ս՝ խնա՛մի՝ իմ միտքըս ի՞նչ ա,
Ես չեմ ուրանում, իմ հոտըս փիս ա:
Արի՛, դու էլ քո չափը ճանաչի՛ր,
Խոսքս լսի՛ր ու լեզուդ քեզ պահի՛ր:
Երկուսս էլ ունինք էդ պակասությունն
Մենք մե՛րը ծածկենք, ու պահենք թաքուն:
Մենք իրար վատն որ ասենք մեր լեզվով,
Խայտառակ կըլինք, կմնանք ամոթով»:—
Էսպես սոխ, սխտոր հոտած մարդըքերքն
Լա՛վ կանեն, իրանց այիբն որ ծածկեն:
Բայց շատ անգամ որ էսպես սխտոր մարդ
Բերանը բանում չի ու վախտ բեվախտ
Ուրշին փուդ դնում, է՛ս ա մեզ էրում,
Էս մեզ խորովում: